



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱԿՅԻՆ ԱՄԵՐԻԿԱԿԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԲԵՐԻՈՅ ԹԵՄԻ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՏԵՆԱՊԵՏԸ**

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ուրբաթ, 20 Յունիսի կեսօրին ընդունեց այցելութիւնը Բերիոյ թեմի Քաղաքական Ժողովի ատենապետ Տիար Տարօն Աւետիսեանի եւ ազնիւ Տիկնոջ՝ Սօնիկի: 7 Յունիսին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքէն ներս տեղի ունեցած Միւռնօրհնէքէն ետք, Տիար Աւետիսեան յատուկ այցելութեամբ մը Լոս Անճելըս կը գտնուի:

Տիար Տ. Աւետիսեան շնորհաւորանքի խօսք ուղղեց Առաջնորդ Սրբազանին՝ անոր վերընտրութեան առիթով, ապա նաեւ տեղեկութիւններ փոխանցեց Բերիոյ թեմի անմիջական ու ապագայի ծրագիրներուն մասին:

Նկատի ունենալով, որ Տիար Աւետիսեան առաջին անգամ ըլլալով Ազգ. Առաջնորդարան կ'այցելէր՝ Նոր շէնքի շինարարական աշխատանքներուն աւարտէն ետք, Առաջնորդ Սրբազանը անոր ծանօթացուց Ազգ. Առաջնորդարանի աշխատանքի մարզերն ու ծրագիրները: Խորհրդակցութեան նիւթ եղան նաեւ ընդհանրապէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան թեմերուն եւ յատկապէս մեր ու Բերիոյ Թեմին միջեւ գործակցութեան հեռանկարները:

**PRELATE WELCOMES THE CHAIRMAN OF THE
EXECUTIVE COUNCIL OF THE ALEPPO DIOCESE**

On Friday, June 20, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy the Chairman of the Executive Council of the Aleppo Diocese Mr. Daron Avedissian and his wife Sonig. Mr. Avedissian arrived in Los Angeles after participating in the blessing of Holy Muron at the Catholicosate of Cilicia in Antelias on June 7th.

The chairman first congratulated the Prelate on his re-election, then went on to report on the current and future activities of the Aleppo Diocese. Since it was his first visit to the Prelacy since the reconstruction, the Prelate offered the guests a tour of the building and the various departments and familiarized them with the undertakings of the Prelacy.

The Prelate and guest also discussed the collaboration between the Dioceses of the Catholicosate of the Holy See of Cilicia, and specifically between the Prelacy and the Diocese of Aleppo.

